

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ \*)

(Դիւցազնական վէպ)

### XVI

Եսպէս անհամար գօրքեր հաւաքեց,  
Եկաւ Սասմայ դաշտ բանակը զարկեց  
Ու ծանըր նըստեց Մըսրայ թագաւոր:  
Էնքան անհամար բազմութիւնն էն օր  
Բաթմանայ գետին եկաւ ու չոքեց,  
Ով եկաւ—խըմեց, գետը ցամաքեց,  
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:  
Զէնով Օհանին զարմանքը տարաւ.  
Քուրքը վեր առաւ, սարը բարձրացաւ,  
Սարը բարձրացաւ, տեսաւ, ինչ տեսաւ,  
Ճերմակ վրրանից դաշտը ճերմակել,  
Ասես էն գիշեր ձըմեռը եկել,  
Ըսպիտակ ձիւնով ծածկել էր Սասուն:  
Լեղին ջուր կըտրեց, կապ ընկաւ լեզուն,  
Հարայ կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ.  
—Վայ, փախէք, եկաւ... հայ, հարայ, եկաւ:  
—Ի՞նչը, հօրեղբայր, ի՞նչը... ի՞նչն եկաւ:

\*) Տես «Մուլճ» № 3.

—Յամն ու կըրակը Դաւթի պինչն եկաւ.  
 Մըսրայ թագաւոր ելել է, եկել,  
 եկել, մեր դաշտին բանակ է զարկել,  
 թիւ կայ աստղերին, թիւ չը կայ զօրքին...  
 Վայ մեր արևին, վայ մեր աշխարհին...  
 Եկ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,  
 Զոքենք առաջին, պաղատանք անենք,  
 Դուցէ մեզ գըթայ,

**ՄԵՂ ԱԾՐԻ ՀՐ ՄԱՅ...**

—Դու կաց, հօրեղբայր, դու դարդ մի անիր.

Գընա, քու օդում դու հանդիսաւ քընիր:

Հիմի ես կ'ելնեմ Սասմայ դաշտ կ'երթամ:

Մըսրայ Մելիքին պատասխան կը տամ:

Ու դընաց Դաւիթ ծանօթ պառաւին:

—Նանի ջան, ասաւ, ժանդոտած ու հին

Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,

Ինչ ունիս՝ ունիս, հաւաքիր, լնձ տուր,

Մի էշ էլ գըտիր, որ վըրէն նըստեմ,

Կըուիւ եմ գընում Մըսրայ զօրքի դէմ:

—Վայ, Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ.

Դու պէտք է էն հօր զաւակը լինես...

Քու հէրն ունէր կըուի համար

Հըրեղէն ձի, ոսկի քամար,

Զըրահ շապիկ, կապէն հագի,

Այ թեին խաչ պատարագի,

Կուռ սաղաւարտ, կայծակի թուր...

Իսկ դու կ'ուզես էշ ու շամփուր...

—Աման, նանի, չժմ լըսել դեռ,

Ո՞ւր են հիմի իմ հօր զէնքեր:

—Հօրեղբօրդդ գընա հարցուր.

Ո՞ւր են, ասան, հանիր, բեր, տնւր.

Բան է, թէ որ չը տայ սիրով,

Աչքը հանիր, խըլիր զօռով:

## XVII

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ,  
—էյ հօրեղբայր, կանչեց հերսոտ.  
Իմ հէրն ունէր կըռւի համար  
Հըրեղէն ձի, ոսկի քամար,  
Զըրահ շապիկ, կապէն հագի,  
Աջ թևին խաչ պատարագի,  
Կուռ սաղաւարտ, կայծակի թուր,  
Կը տաս—բեր, տնւր...  
—Վայ, Դաւիթ ջան,  
Ահից գոռաց Զէնով Օհան.  
Քու հօր մահւան տարուց, օրից  
Դուրս չեմ հանել ձին ախոռից,  
Ոչ սընտուկից թուր կայծակին,  
Զըրահ շապիկ, ոսկի գօտին...  
Ինձ թռլ, աման, մի ըսպանիր,  
Կուղես, հըրէն, գընա, հանիր:

## XVIII

Դաւիթը թողեց Զէնով Օհանին,  
Գընաց, ախոռից դուրս քաշեց հօր ձին,  
Զըրահը հագաւ, զէնքերը կապեց,  
Ձին հեծաւ, կանգնեց ու ձէնով երգեց.  
«Սասման քոյրեր, բարնվ մնաք,  
Քուրութիւն էք արել ինձ.  
Սասման մայրեր, բարնվ մընաք,  
Մօր նըման էք սիրել ինձ:

Կըռիւ կ'երթամ, դուշմանը ձեղ  
Զը գայ, գերի չը տանի.  
Ով իմանայ—մին էլ էսպէս  
Ինձ չը տեսնէք կենդանի...

Խընդում անէք, թէ դաշտ գընաք,  
Զը մոռանաք ձեր Դաւթին,  
Բարնվ մընաք, բարնվ կենաք  
Մեր աշխարհին, մեր հանդին:

Երգեց Դաւիթ ու ձին քըշեց,  
Զէնով Օհան հոգոց քաշեց.  
—Ափսոս, հազար ափսոս հըրեղէն մեր ձին,  
Ա՛խ, հըրեղէն մեր ձին,  
Ափսոս, հազար ափսոս մեր ոսկի գօտին  
Ա՛խ, մեր ոսկի գօտին,  
Ափսոս թանգ կապէն, որ հագին տարաւ,  
Ա՛խ, որ հագին տարաւ:  
Դաւիթ բարկացաւ,  
Զին քըշեց, դարձաւ.  
Օհանը վախեց,  
Իր երգը փոխեց.  
—Ափսոս, նորելուկ Դաւիթը կորաւ,  
Ա՛խ, Դաւիթը կորաւ:

Էս որ իմացաւ,  
Դաւիթ մեղմացաւ,  
Իջաւ, Օհանի ձեռքը համբուրեց,  
Զէնով Օհանն էլ ինչպէս հայր ու մեծ  
Օրհնեց, իսրատեց նըրան հայրաբար  
Ու խըրատելով՝ դըրաւ ճանապարհ:

## XIX

Իր ձին հեծաւ, քըշեց Դաւիթ,  
Ելաւ Սասմայ սարի գըլուխ,  
Նայեց ներքե, — դաշտը խիտ-խիտ  
Կոխած փոշին, կըրակ ու ծուխ:  
Տեսաւ, կանգնեց ամպի տակին,  
Ու էն անծայր ծովի վըրայ

Գոռաց ձենովն իր ահագին՝  
Տարածելով սարսափ ու ահ.

—Ով քընած էք—արթնւն կացէք,  
—Ով արթուն էք—ելէք, կեցէք,  
Ով կեցեր էք—զէնք կապեցէք,  
Զէնք էք կապել—ձի թամբեցէք,  
Ձի էք թամբել—ելէք, հեծէք,  
Յետոյ չասէք, թէ մենք քընած,  
Դաւիթ գողգող եկաւ, գընաց...»

Կսպէս գոռաց, ասպանդակեց  
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,  
Մըսրայ զօրքի մէջ տեղ զարկեց,  
Շողացնելով թուր—կայծակին:

Զարդեց, փըշրեց մինչև կէսօր:  
Կէս օր արիւնն ելաւ հեղեղ,  
Քըշեց, տարսաւ հաղարաւոր  
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար զօրքի մէջ մի ալեոր,  
Աշխարհը տեսած ու բանագէտ,  
—Տղերք, ասաւ, ճամբայ տուէք,  
Գընամ, խօսեմ ես Դաւթի հետ:

Գընաց, կանգնեց Դաւթի առաջ,  
Կսպէս խօսեց էն ծերունին.  
—Դաւար կենայ կուռըդ, ով քաջ,  
Թուրըդ կտրուկ միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խօսքին մըտիկ,  
Տես՝ քու խելքը ինչ է կըտրում,  
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,  
Հէր ես սըրամնց դու կոտորում:

Այեն մինը մի մօր որդի,  
Այեն մինը մի տան ճըրագ,  
Որը կինն է թողել էնտեղ՝  
Աչքը ճամբին, խեղճ ու կրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,  
Որը ծընող աղքատ ու ծեր,  
Որը լացով, քողն երեսին,  
Նորապըսակ ջահէլ հարսին...

Թագաւորը զօրով թըրով  
Հաւաքել է, էստեղ բերել,  
Խեղճ մարդիկ ենք պակաս օրով,  
Մենք քեզ վսաս ինչ ենք արել:

Թագաւորն է քու թըշնամին,  
Կըռիւ ունիս, իր հետ արա.  
Հէր ես քաշում թուր-կայծակին  
Էս անձարակ խալիսի վըրայ:

—Լաւ ես ասում դու, ծերունի,  
Ասաւ Դաւիթն ալեսրին,  
Բայց թագաւորն ուր է հիմի,  
Որ սև կապեմ նրա օրին:

—Մեծ վրանում քընած է նա,  
Էն, որ միջից ծուխը կ'ելնի.  
Էն ծուխն էլ հօ ծուխ չի, որ կայ,—  
Գոլորշին է իր բերանի,

Ասին. դէպի մեծ վրանը  
Ասպանդակեց Դաւիթն իր ձին,  
Քըշեց, գընաց ու դըռանը  
Գուաց կանգնած արաբներին.

—Ո՞ւր է, ասաւ, ինչ է կորել,  
Դուրս կանչեցէք, դայ ասպարէզ.  
Թէ մահ չունի—մահ եմ բերել,  
Գըրող չունի—գըրողն եմ ես:

Մելիքն, ասին, քուն է մըտել,  
Օխտը օրով պէտք է քընի.  
Երեք օրն է դեռ անց կացել,  
Չորս օր էլ կայ—քունը առնի:

—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ  
Խալսին լցրել ծովս արիւնի,  
Ինքը մտել վըրանի մէջ,  
Օխտը օրով հանդիսաւ քընի...

Քընել-մընել չեմ հասկանում:  
Վեր կացրէք շուտ, դուրս դայ մէյդան,  
Էնպէս դըրան ես քընացնեմ,  
Որ չը զարթնի էլ յաւիտեան...

Ելան մարդիկ, ճարահատուած՝  
Շամփուր դըրին թէժ կըրակին  
Ու զարկեցին խոր մըրափած  
Մըրա-Մելքի բաց կըրընկին:

—Օ՞ֆ, էլ հանդիսաւ քուն չունի մարդ  
Էս անիծուած լըւի ձեռից,  
Խոր մըռընչաց հըսկան հանդարտ  
Ու շուռ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ դութանի  
Խոփը, դըրին թէժ կըրակին  
Ու կառ-կարմիր, կէծկըծալի,  
Շիկնած դըրին մերկ թիկունքին:

— Օ՞ք, էլ հանգիստ քուն չունի մարդ  
էս անիրաւ մոծակներից.  
Աչքը բացաւ հրսկան հանգարտ,  
Ուզում էր ետ քընել նորից.

Տեսաւ Դաւթին, գլուխն ահեղ  
Վեր բարձրացրեց մըուրնչալով,  
Փըչեց վըրէն, որ թըռցընի  
Էն աժդըհին մի փըչելով.

Տեսաւ, տեղից ժաժ չի դալի,  
Զարմաննքն ու ահ պատեց հոդին.  
Արնոտ աջերն ըսպառնալի  
Յառեց խօժոռ Դաւթի աչքին:

Նայեց թէ չէ—ըզդաց՝ իր մէջ  
Տասը գոմի ուժ պակասեց,  
Պառկած տեղից վրայ նստեց  
Ու ժպտալով՝ հետը խօսեց:

— Բարճվ, Դաւիթ. յոդնած ես դեռ,  
Ե՛կ, մի նստիր, խօսենք կարդին...  
Յետոյ դարձեալ կոիւ կ'անենք,  
Եթէ կըսիւ կ'ուզես կըրկին...»

Իր վըրանում ըրոնակալը  
Քառսուն դաղ խոր հոր էր փորեւ  
Յանցով փակել մութ բերանը,  
Վըրէն փափուկ խալի փըռել:

Ում որ յաղթել չէր կարենում,  
Շողոմելով կանչում էր նա,  
Նըստեցնում էր իր վըրանում  
Էն կօրստեան հորի վըրայ:

իշաւ Դաւիթ ձիուցը ցած,  
 Գլնաց, նըստեց... ընկաւ հորը:  
 —Հա, հա, հա, հա, վերից խընդաց  
 Մորայ դաժան թագաւորը:

—Դէ, թնդ հիմի գընայ, խաւար  
 Հորում վըթի, Էնքան մընայ.  
 Ու ահագին մի ջաղացքար  
 Բերաւ, գըրաւ հորի վըրայ:

### ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Կը շաբանակուի)